



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Dr. Armond Aghakhanian, President  
Steve Frintner, Vice President  
Charlene Tabet, Clerk  
Steve Ferguson  
Dr. Roberta Reynolds

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

23 November 2020

ԲԴՄՇ-ի հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Լուս Անջելեսի գավառում Կորոնավիրուսի վարակի տագնապալի աճը խանգարեց հունվարին մեր դպրոցների վերաբացման նոր ծրագրերին՝ հիբրիդ ուսուցման մոդելի միջոցով: Մա հիասթափեցնող նորություն է բոլորիս համար, քանի որ հուսով էինք, որ հունվարին կկարողանայինք աշակերտներին և աշխատակիցներին վերադարձնել դպրոց:

Պետական ուղեցույցների համաձայն, մենք պետք է 2 շաբաթ մնանք կարմիր մակարդակում դպրոցները վերաբացելու համար: Այս կայքում կարող եք ծանոթանալ Կալիֆոռնիայի նահանգի ուղեցույցների հետ. <https://covid19.ca.gov/safer-economy/>: Լուս Անջելեսի գավառի առողջապահական տեղեկությունները ստանալու համար հյուրընկալել. <http://publichealth.lacounty.gov/>

Երկրորդ կիսամյակի սկսվելուց հետո, դասացուցակների և ուսուցիչների նշանակումները փոփոխելու փոխարեն, մենք որոշել ենք **շարունակել հեռակա ուսուցման մոդելով մինչև ուսումնական տարվա վերջը**: Չնայած հեռակա ուսուցումը կդառնա մեր հիմնական ուսումնական մոդելը, մենք կշարունակենք անցկացնել մի քանի միջոցառումներ՝ անձամբ, հետևելով առողջապահական ընթացիկ ուղեցույցներին:

Մենք հասկանում ենք, որ հեռակա ուսուցումը դժվարություն է առաջացնում որոշ աշակերտների համար: Հետևաբար, մենք ծրագիր ենք մշակում օգնելու բավարարել այդ աշակերտների կրթական և սոցիալ-հուզական կարիքները: Հիշեցնում եմ, եթե ձեր երեխային հարկավոր է հոգեկան առողջության աջակցություն, գանգահարել **Բրբենքի ընտանեկան ծառայությունների գործակալությանը 818-845-7671** **հեռախոսահամարով շաբաթը 7 օր և օրը 24 ժամ**:

Ստորև բերված են մի քանի լրացուցիչ անհատական աջակցության հնարավորություններ, երբ առողջական պայմանները թույլ տան.

- **Հատուկ ուսուցում** – Աշակերտների և ընտանիքների համար ընտրովի հիմունքներով, մենք անձամբ քննություններ և փոքր խմբով ուսուցում կկազմակերպենք:
- **Կրթական միջամտություն** – Կրթական դժվարություններ ունեցող աշակերտների համար (D և F գնահատական ունեցող, 1և 2 գնահատական ունեցող), կտրամադրենք անձամբ միջամտություն:
- **Երեխաների երկարացված խնամք** – Մենք արդեն երկարացրել ենք երեխաների խնամքի կենտրոնի ժամերը դպրոցական օրերին: Երբ տեղեր լինեն, մենք անվճար կըղունենք սոցիալ տնտեսական անապահով աշակերտներին, անգլերեն սովորողներին, ուրիշի տանը և անօթևան աշակերտներին «Զանգի շուրջ» ծրագիր (ATB)՝ ուսուցման կորուստը կանխելու համար: Հյուրընկալել մեր կայքը. [https://www.burbankusd.org/childcare for more information](https://www.burbankusd.org/childcare%20for%20more%20information).
- **Միջոցառումներ** – Երբ բարելավվեն առողջական պայմանները, հետևելով առողջապահական ուղեցույցներին, մենք աշակերտներին դպրոց կհրավիրենք արտադասարանական միջոցառումներին և ակումբներում մասնակցելու համար: Մա կներառնի տարեվերջյան միջոցառումները, հատկապես 12-րդ, 8-րդ և 5-րդ դասարանցիների համար: Մենք ցանկանում ենք նաև հնարավորություն տալ մեր աշակերտներին հանդիպել ուսուցիչների և համադասարանցիների հետ: Մենք կշարունակենք հետևել առողջապահական ուղեցույցներին և կիրականացնենք ինչքան հնարավոր է շատ միջոցառումներ 2-րդ կիսամյակի ընթացքում:
- **Սպորտային ծրագրեր** – Մենք կշարունակենք սպորտային ծրագրերը հետևելով առողջապահական ընթացիկ հրահանգների (այս պահին թույլատրվում է միայն պարապմունք):

ԲԴՄՇ-ի կրթական գրասենյակի հերթական վերջին 2 հանդիպումները կարող եք դիտել այլ հղումների միջոցով.

11/19/20:

[https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view\\_id=4&clip\\_id=7950&meta\\_id=356956](https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7950&meta_id=356956)

11/5/20:

[https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view\\_id=4&clip\\_id=7948&meta\\_id=356603](https://burbankusd.granicus.com/MediaPlayer.php?view_id=4&clip_id=7948&meta_id=356603)

Ես հասկանում եմ, որ սա այն տեղեկությունը չէ, որ դուք ցանկանում էիք ստանալ, այնուամենայնիվ, մենք պետք է առաջնահերթությունը տանք մեր աշակերտների, ընտանիքների և աշխատակիցների առողջությանն ու անվտանգությանը: Մենք պետք է հատկացնենք նաև հետևողական և կայուն կրթական միջավայր: Մենք կշարունակենք ընդլայնել հեռակա ուսուցման մեր ծրագիրը տալով անձամբ մասնակցելու հնարավորությունն, երբ առողջապահական պայմանները բարելավվեն:

Անկեղծորեն,



Դոկտոր Մաթ Չիլլ  
Գերատեսուչ